

**Sub-Grant Agreement
ENI/2016/382-304-SG-22**

**Ենթադրամաշնորհային համաձայնագիր
ENI/2016/382-304-SG-22**

The “Armenian Lawyers’ Association” non-governmental organisation as the lead organisation of the “Commitment to Constructive Dialogue” project funded by the European Union, represented by and through Karen Zadoyan (hereinafter Sub-Grantor), the President of the “Armenian Lawyers’ Association” Non-Governmental Organisation, and the “Association of Accountants of SME of Armenia” Non-Governmental Organisation (hereinafter “Sub-Grantee”), represented by and through Vahagn Hambardzumyan, the President of the Organisation, called together “Parties”, signed this Agreement on the following:

«Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը, հանդես գալով որպես Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի ղեկավար կազմակերպություն, (այսուհետ՝ Ենթադրամաշնորհատու), ի դեմս կազմակերպության նախագահ Կարեն Զադոյանի, մի կողմից, և «Հայաստանի ՓՄՁ հաշվապահների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Ենթադրամաշնորհառու), ի դեմս կազմակերպության նախագահ Վահագն Համբարձումյանի, մյուս կողմից, երկուսը միասին անվանվելով՝ Կողմեր, կնքեցին սույն Համաձայնագիրը հետևյալի մասին.

A. Purpose of the Agreement

1. Under this Agreement, pursuant to the “Commitment to Constructive Dialogue” grant contract (hereinafter Grant Contract) ENI/2016/382-304 signed on 15 December 2016 between the European Union and the “Armenian Lawyers’ Association” non-governmental organisation on behalf of the joint consortium composed of the “Armenian Lawyers’ Association” non-governmental organisation, “AGORA Central Europe” non-governmental organisation (Czech Republic), Armenian Centre for Democratic Education (CIVITAS), International Centre for Human Development, SME Cooperation Association, and the Union of Communities of Armenia, hereby awards a sub-grant to the Sub-Grantee for the implementation of the “RA Taxation Alternative Systems Monitoring and Improvement Plan” sub-grant project (hereinafter sub-grant project).

Ա. Համաձայնագրի նպատակը

1. Սույն համաձայնագրով Ենթադրամաշնորհատուն, Եվրոպական Միության և «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության միջև 2016թ. դեկտեմբերի 15-ին «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության, «Ագորա Մենթրլ Յուրոփ» հասարակական կազմակերպության (Չեխիա), Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոնի (ՄԻՎԻՏՄՍ), Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի, ՓՄՁ համագործակցության ասոցիացիայի և Հայաստանի համայնքների միության հետ համատեղ կոնսորցիումի անունից կնքված թիվ ENI/2016/382-304 «Կառուցողական երկխոսության հանձնառություն» դրամաշնորհային պայմանագրի (այսուհետ տեքստում՝ «Դրամաշնորհային պայմանագիր») շրջանակներում Ենթադրամաշնորհառուին տրամադրում է ենթադրամաշնորհ «**ՀՀ հարկման այլընտրանքային համակարգերի մոնիթորինգի և բարելավման ծրագիր**» ենթադրամաշնորհային ծրագիրն (այսուհետ՝ ենթադրամաշնորհային ծրագիր) իրականացնելու համար:

2. The Sub-Grantee ought to implement the sub-grant project,

2. Ենթադրամաշնորհառուն պարտավոր է

Կ. Զ.

Վ. Կ.

in accordance with the project presented in Annex 1 under the title “Sub-Grant Proposal Application and Logical Framework” in this agreement and the budget line descriptions, their conditions and those set out in Annex 3 of this agreement titled “Excerpt from the General Rules of the “Commitment to Constructive Dialogue” Project.”

իրականացնել ենթադրամաշնորհային ծրագիրը՝ համաձայն սույն համաձայնագրի «Ենթադրամաշնորհային առաջարկի հայտ և տրամաբանական կառուցվածք» վերնագրով Հավելված 1-ում ներկայացված ծրագրի և «Ծրագրի բյուջե և Ծրագրի նկարագրություն» վերնագրով Հավելված 2-ում ներառված բյուջեի տողերի նկարագրությունների, դրանց պայմանների և սույն համաձայնագրի «Քաղվածք «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի ընդհանուր կանոններից» վերնագրով Հավելված 3-ում նշված պայմանների:

B. Terms of the Agreement

1. This agreement is effective during the period between 1 January 2019 and 30 June 2019.
2. The Sub-Grantee is obliged to fulfill the obligations assumed under this Agreement in the period set out in this clause.

Բ. Համաձայնագրի ժամկետը

1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է 2019 թվականի հունվարի 1-ից և գործում է մինչև 2019 թվականի հունիսի 30-ը:
2. Ենթադրամաշնորհառուն պարտավորվում է սույն Համաձայնագրով ստանձնած պարտավորությունները կատարել սույն կետում նշված ժամանակահատվածում:

C. The Total Sub-Grant Project Cost and Funding Conditions

1. The total eligible costs of the Sub-Grant Project are estimated at AMD **5,500,000 (five million five hundred thousand)**.
2. The Sub-Grantor undertakes to finance a maximum amount of AMD **4,950,000 (four million nine hundred and fifty thousand)** from the amount specified in Clause 1 of Part C of this Agreement.
3. The Sub-Grantee undertakes to make a financial contribution of AMD **550,000 (five hundred and fifty thousand)** in order to implement the sub-grant project within the terms foreseen in the Agreement.

Գ. Ենթադրամաշնորհային ծրագրի գումարային արժեքն ու ֆինանսավորման պայմանները

1. Ենթադրամաշնորհային ծրագրի ընդհանուր թույլատրելի գումարային արժեքը մինչև **5,500,000** (հինգ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ է:
2. Ենթադրամաշնորհատուն համաձայնվում է ֆինանսավորել սույն Համաձայնագրի Գ մասի 1-ին կետում նշված գումարից առավելագույնը **4,950,000** (չորս միլիոն ինը հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը:
3. Ենթադրամաշնորհառուն պարտավորվում է Համաձայնագրով նախատեսված ժամկետներում ենթադրամաշնորհային ծրագրի իրականացման համար կատարել դրամային ներդրում **550,000** (հինգ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամի չափով:

D. Reporting and Payments

1. After the launch of the sub-grant project, during the implementation of the project the Sub-Grantee shall submit narrative (descriptive) and financial reports pursuant to Annexes 4 and 5 of this Agreement by the fifth working day of the following month.

Դ. Հաշվետվություններ և վճարումներ

1. Ենթադրամաշնորհային ծրագրի մեկնարկից հետո ծրագրի իրականացման ընթացքում ենթադրամաշնորհառուն պարտավոր է մինչև հաջորդող ամսվա հինգերորդ աշխատանքային օրը ամսական կտրվածքով ներկայացնել պատմողական

After the end of the sub-grant project, the Sub-Grantee shall submit to the Sub-Grantor complete narrative (descriptive) and financial reports pursuant to Annexes 4 and 5 of this Agreement during 30 days after the end of the project.

All the events and activities included in the reports, as well as the expenses made to implement them, must be justified by documents, as prescribed by law.

The reports must be signed by the head of the Sub-Grantor organisation or the sub-grant project manager and be stamped with the seal of the Sub-Grantor organisation.

2. The payments foreseen in the Agreement will be made to the Sub-Grantee via a non-cash method, through transferring them to the bank account of the Sub-Grantee mentioned under this agreement. The payments of the initial tranche foreseen in this clause will be made on the basis of the sub-grant project narrative (descriptive) and financial reports set out in Clause 1 of Part D of this Agreement, in 3(three) tranches, according to payment applications.

3. The Sub-Grantor shall make the payment of the final tranche based on the timetable set out in Clause 2 of Part D of the Agreement after the end of the sub-grant project, during five banking days upon the approval of the final narrative (descriptive) and financial reports.

4. The reports mentioned in the Agreement are submitted in accordance with the Sub-Grantor's Grants Policy. The excerpt on the provisions of submitting the Reports foreseen in the Grants Policy is attached to this Agreement as Annex 6.

(նկարագրական) և ֆինանսական հաշվետվություններ՝ սույն Համաձայնագրի Հավելվածներ 4-ի և 5-ի համաձայն:

Ենթադրամաշնորհային ծրագրի ավարտից հետո ենթադրամաշնորհատուն պարտավոր է ծրագրի ավարտից հետո 30 օրվա ընթացքում Ենթադրամաշնորհատուին ներկայացնել պատմողական (նկարագրական) և ֆինանսական ամբողջական հաշվետվություններ՝ սույն Համաձայնագրի Հավելվածներ 4-ի և 5-ի համաձայն:

Հաշվետվություններում ներառված բոլոր միջոցառումներն ու գործողությունները, դրանց իրականացման ուղղությամբ կատարված ծախսերը պետք է հիմնավորվեն օրենքով նախատեսված փաստաթղթերով:

Հաշվետվությունները պետք է ստորագրվեն Ենթադրամաշնորհատու կազմակերպության ղեկավարի կամ ենթադրամաշնորհային ծրագրի ղեկավարի կողմից, և կնքվեն Ենթադրամաշնորհատու կազմակերպության կնիքով:

2. Համաձայնագրով նախատեսված վճարումները Ենթադրամաշնորհատուին կկատարվեն անկանխիկ եղանակով՝ սույն համաձայնագրով նշված Ենթադրամաշնորհատուի բանկային հաշվեհամարին փոխանցելու միջոցով: Սույն կետում նախատեսված նախնական վճարաբաժնի վճարումները կկատարվեն սույն Համաձայնագրի Դ մասի 1-ին կետում նշված ենթադրամաշնորհային ծրագրի պատմողական (նկարագրական) և ֆինանսական հաշվետվությունների հիման վրա՝ 3 (երեք) մասնաբաժնով՝ համաձայն վճարման հայտերի:

3. Համաձայնագրի Դ մասի 2-րդ կետով նախատեսված Ժամանակացույցի հիման վրա վերջնական վճարաբաժնի վճարումը Ենթադրամաշնորհատուի կողմից կկատարվի ենթադրամաշնորհային ծրագրի ավարտից հետո՝ վերջնական պատմողական (նկարագրական) և ֆինանսական հաշվետվությունները հաստատվելուց հետո՝ հինգ բանկային օրվա ընթացքում:

4. Համաձայնագրում նշված հաշվետվությունները ներկայացվում են Ենթադրամաշնորհատուի Դրամաշնորհների տրամադրման քաղաքականության համապատասխան: Դրամաշնորհների

4. 9.

Գ. Կ.

5. Sub-grant payments will be made only when the payment application is provided in accordance with Annex 7 of the Agreement.
6. The Sub-Grantor is not obliged to reimburse the expenses of the Sub-Grantee that have exceeded the obligated funding amount, and/or are ineligible pursuant to Annexes 2 and 3 of the Agreement.
7. The Sub-Grantor has the right to unilaterally terminate this Agreement and demand the paid amount back, if the Sub-Grantee has not used the provided amount in accordance with this Agreement. The amount subject to being returned can include both the amount paid for the implementation of the sub-grant project and the expenses made that do not correspond to this Agreement and its annexes.

The Sub-Grantor carries out oversight during the entire sub-grant implementation period, has the right to demand and receive all the project and financial documents, materials and other necessary information related to the project, in accordance with this Agreement and the Sub-Grantor's Grants Policy. In the scope of this Agreement the Parties agree that the Sub-Grantor and/or its authorised persons have the right to make visits to the Sub-Grantee's project offices for the purpose of sub-grants project monitoring and evaluation with or without notifying about it beforehand.

For the monitoring and evaluation of the sub-grant project, the Sub-Grantor is obliged to submit the schedule of the events/activities planned for the following month during the last 5 working days of the current month. In case of planning to make a change in the schedule, the Sub-Grantee has to notify the Sub-Grantor within a reasonable time frame.

տրամադրման քաղաքականությամբ նախատեսված Հաշվետվությունների ներկայացման դրույթների վերաբերյալ քաղվածքը կցվում է սույն Համաձայնագրին որպես Հավելված 6:

5. Ենթադրամաշնորհատուին վճարումներ կկատարվեն միայն վճարման հայտի ներկայացման դեպքում՝ Համաձայնագրի Հավելված 7-ի համաձայն:
6. Ենթադրամաշնորհատուն չի պարտավորվում փոխհատուցել Ենթադրամաշնորհատուի այն ծախսերը, որոնք գերազանցել են պարտավորված ֆինանսավորման չափը և/կամ անընդունելի են՝ Համաձայնագրի Հավելվածներ 2-ի և 3-ի համաձայն:
7. Ենթադրամաշնորհատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն Համաձայնագիրը և հետ պահանջել վճարված գումարը, եթե Ենթադրամաշնորհատուն տրամադրված գումարը չի օգտագործել սույն Համաձայնագրին համապատասխան: Ընդ որում, վերադարձման ենթակա գումարը կարող է ներառել ինչպես ենթադրամաշնորհային ծրագրի իրականացման համար վճարված գումարը, այնպես էլ այն կատարված ծախսերը, որոնք չեն համապատասխանում սույն Համաձայնագրին և դրա հավելվածներին: Ենթադրամաշնորհատուն վերահսկողություն է իրականացնում ենթադրամաշնորհի ամբողջ ընթացքում, իրավունք ունի պահանջել և ստանալ ծրագրին առնչվող բոլոր ծրագրային և ֆինանսական փաստաթղթերը, նյութերը և այլ անհրաժեշտ տեղեկատվությունը՝ համաձայն սույն համաձայնագրի և Ենթադրամաշնորհատուի դրամաշնորհների տրամադրման քաղաքականության: Սույն համաձայնագրի շրջանակներում Կողմերը համաձայնվում են, որ Ենթադրամաշնորհատուն և/կամ իր լիազոր անձիք իրավունք ունեն ենթադրամաշնորհային ծրագրի մոնիթորինգի և գնահատման նպատակով իրականացնել այցելություններ Ենթադրամաշնորհատուի ծրագրային գրասենյակներ, այդ մասին նախապես տեղեկացնելով կամ առանց դրա: Ենթադրամաշնորհային ծրագրի մոնիթորինգի և գնահատման նպատակով ընթացիկ ամսվա վերջին 5 աշխատանքային օրերի ընթացքում Ենթադրամաշնորհատուն պարտավոր է ներկայացնել հաջորդ ամսվա

միջոցառումների/գործողությունների
ժամանակացույցը: Ժամանակացույցում
փոփոխություն նախատեսելու դեպքում
Ենթադրամաշնորհատուն պարտավոր է
ողջամիտ ժամկետներում այդ մասին
տեղեկացնել Ենթադրամաշնորհատուին:

8. The Sub-Grantee will be exempted from paying the value added tax based on the document provided by the European Union. The exemption foreseen in this clause only concerns the sub-grant project lead organisation.

8. Ենթադրամաշնորհատուն Եվրոպական միության կողմից տրամադրված փաստաթղթի հիման վրա կազատվի Ավելացված արժեքի հարկի վճարումից: Սույն կետով նախատեսված վճարման ազատումը վերաբերում է բացառապես ենթադրամաշնորհային ծրագրի ղեկավար կազմակերպությանը:

E. Transitional Provisions

1. By signing this Agreement, the Sub-Grantee verifies that he/she has read and gotten familiar with this sub-grant agreement and all the Annexes that are its integral parts, Sub-Grantor's Grants Policy, as well as all the documents referred to in this Agreement and/or its Annexes, and thus undertakes to comply with and adhere to all the requirements set out in the above-mentioned documents.

Ե. Անցումային դրույթներ

2. The Sub-Grantee undertakes to take any measure to prevent any possible situation of a conflict of interest which is present or can emerge during the sub-grant project implementation. The description of conflicts of interest is presented in Annex 8 of this Agreement.

1. Ստորագրելով սույն համաձայնագիրը, Ենթադրամաշնորհատուն հավաստում է, որ ծանոթացել է սույն ենթադրամաշնորհային համաձայնագրին, դրա անբաժան մասը կազմող Հավելվածներին, Ենթադրամաշնորհատուի դրամաշնորհների տրամադրման քաղաքականության, ինչպես նաև այն բոլոր փաստաթղթերին, որոնց վրա հղում է կատարված սույն Համաձայնագրում և/կամ դրա Հավելվածներում, և պարտավորվում է անվերապահորեն կատարել վերոնշյալ փաստաթղթերում սահմանված բոլոր պահանջները:

3. The Sub-Grantee is obliged to submit declarations on the absence of conflicts of interest for approval to the sub-grant project staff before signing job or civil law contracts with them. The declaration template is attached to this Agreement as Annex 8.

2. Ենթադրամաշնորհատուն պարտավորվում է ձեռնարկել ցանկացած միջոց կանխելու շահերի բախման ցանկացած իրավիճակ, որը առկա է կամ կարող է ի հայտ գալ ենթադրամաշնորհային ծրագրի իրականացման ընթացքում: Շահերի բախման նկարագիրը ներկայացված է սույն Համաձայնագրի Հավելված 8-ում:

4. In order to ensure the visibility and transparency of the sub-grant project, the Sub-Grantee has to:

3. Ենթադրամաշնորհատուն պարտավոր է ենթադրամաշնորհային ծրագրի աշխատակազմի հետ նախքան աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագրերի կնքումը, նրանց հաստատմանը ներկայացնել շահերի բախման բացակայության մասին հայտարարություն, որը կցված է սույն Համաձայնագրին որպես Հավելված 8:

4. Ենթադրամաշնորհային ծրագրի տեսանելիությունն ու թափանցիկությունն ապահովելու նպատակով, Ենթադրամաշնորհատուն պարտավոր է

G. G. c

J. H.

- a) Hang a project stand at the project office entrances, in a visible spot;
- b) Ensure the presence of the project banner during project events;
- c) Ensure large-scale (to the extent possible) coverage of events.

Other rules for ensuring the visibility and transparency of the sub-grant project are presented in Annex 3 of this Agreement.

The forms, questionnaires, evaluation sheets, as well as other information materials designed to be used in the scope of the sub-grant project, are subject to be agreed with the Sub-Grantor before being used and/or published.

- 5. This Agreement is signed in two copies of equal legal power both in Armenian and English. In case differences arise, the Armenian version will prevail.
- 6. In case contradictions are found between the annexes foreseen in the Agreement and the annex titled "Excerpt from the General Rules of the "Commitment to Constructive Dialogue" Project" the latter will prevail.
- 7. Any change and/or addition in this Agreement is valid only after the day the written bilateral sub-agreements are stamped and signed by the authorised representatives of the Parties. The sub-agreements are regarded as an integral part of this Agreement.
- 8. Any disputes that might arise in relation to this Agreement are solved through constructive negotiations. In case no agreement is reached, the dispute resolution is handed over to the RA competent court and the RA legislation is applied for their solution.

ա) ծրագրային գրասենյակների մուտքերի մոտ երևացող հատվածում փակցնել ծրագրային ցուցանակ.

բ) ծրագրային միջոցառումների ընթացքում ապահովել ծրագրային բաների առկայությունը.

գ) ապահովել միջոցառումների հնարավորինս լայնամասշտաբ լուսաբանումը:

Ենթադրամաշնորհային ծրագրի տեսանելիությունն ու թափանցիկությունն ապահովելու այլ կանոնները ներկայացված են սույն Համաձայնագրի կցված Հավելված 3-ի շրջանակներում:

Ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակներում մշակված և կիրառման ենթակա ձևաթղթերը, հարցաթղթերը, գնահատման թերթերը, ինչպես նաև այլ տեղեկատվական նյութերը ենթակա են համաձայնեցման Ենթադրամաշնորհատուի հետ՝ նախքան դրանց կիրառումը և/կամ հրատարակումը:

- 5. Սույն Համաձայնագիրը կնքվում է երկու հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող օրինակով հայերեն և անգլերեն: Տարաձայնությունների առաջացման դեպքում գերակայում է հայերեն տարբերակը:
- 6. Համաձայնագրով նախատեսված հավելվածների և «Քաղվածք «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի ընդհանուր կանոններից» հավելվածի միջև հակասությունների դեպքում գերակա է վերջինս:
- 7. Սույն Համաձայնագրում ցանկացած փոփոխություն և/կամ լրացում վավեր է միայն Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից երկկողմանի գրավոր ենթահամաձայնագիր կնքելու և ստորագրելու օրվանից: Ենթահամաձայնագրերը համարվում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:
- 8. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են կառուցողական բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է ՀՀ իրավասու դատարանի քննությանը և դրանց լուծման համար կիրառվում է ՀՀ օրենսդրությունը:

F. Annexes

This Agreement consists of the following 8 annexes:

Annex 1. Sub-Grant Proposal Application and Logical Framework

Annex 2. Project Budget and Project Description

Annex 3. Excerpt from the General Rules of the “Commitment to Constructive Dialogue” Project

Annex 4. Narrative (Descriptive) Report of the Sub-Grant Project

Annex 5. Financial Report of the Sub-Grant Project

Annex 6. Excerpt from the Grants Policy of the “Armenian Lawyers’ Association” non-governmental organisation

Annex 7. Payment Application

Annex 8. Declaration on Absence of Conflicts of Interest

Any note made in the Agreement where the term “Agreement” is used implies all the annexes foreseen in this clause.

Զ. Հավելվածներ

Սույն Համաձայնագիրը բաղկացած է հետևյալ 8 հավելվածներից.

Հավելված 1. Ենթադրամաշնորհային առաջարկի հայտ և տրամաբանական կառուցվածք.

Հավելված 2. Ծրագրի բյուջե և Ծրագրի նկարագրություն.

Հավելված 3. Քաղվածք «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի ընդհանուր կանոններ.

Հավելված 4. Ենթադրամաշնորհային ծրագրի պատմողական (նկարագրական) հաշվետվություն.

Հավելված 5. Ենթադրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվություն.

Հավելված 6. Քաղվածք «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության Դրամաշնորհների տրամադրման քաղաքականության.

Հավելված 7. Վճարման հայտ.

Հավելված 8. Շահերի բախման բացակայության մասին հայտարարություն:

Համաձայնագրում կատարված ցանկացած նշում, որտեղ հիշատակվում է «Համաձայնագիր» եզրույթը, իր մեջ ներառում է նաև սույն կետով նախատեսված բոլոր հավելվածները:

Ենթադրամաշնորհատու
Sub-Grantor

«Իրավաբանների հայկական ասոցիացիա»
հասարակական կազմակերպություն
Armenian Lawyers’ Association NGO

Հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 7, բն. 2

Address: 7 Nalbandyan str., suite 2, Yerevan

ՀՎՀՀ/TIN: 01512352

Բանկ/Bank:

Ենթադրամաշնորհառու
Sub-Grantee

«Հայաստանի ՓՄՁ հաշվապահների ասոցիացիա» ՀԿ
“Association of Accountants of SME of Armenia” NGO

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վաղարշյան 12

ՀՎՀՀ՝ 00138021

Address: 12 Vagharshyan Str., Yerevan, RA

TIN: 00138021

Բանկ՝
«Արդշին Բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2474702647780000

Bank:
“Ardshinbank” CJSC

Ամերիաբանկ,
AMERIABANK

Acc. N: 2474702647780000

Հ/Հ/ Acc. N: 1570024466470500

Նախագահ /President


Նախագահ/ President
Պաշտոն/Title

Պաշտոն /Position

Կարեն Զադոյան/ Karen Zadoyan
Անուն, ազգանուն/ Name, Surname

Վահագն Համբարձումյան /Vahagn Hambarzumyan
Անուն, ազգանուն/ Name, Surname

Ստորագրություն/ Signature


Ստորագրություն

27/12/2018
Ամսաթիվ/ Date

27/12/2018
Ամսաթիվ

